

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քնարիկ Աբրահամեան

spyrkka@gmail.com

Ծնած է 1984ին, Գիւմրի: 2006ին աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ԽԱՀՊՄՀ) բանասիրական բաժանմունքը: 2013ին թեկնածուական պաշտպանած է «Զարեհ Խրախունին եւ արեւելահայ բանաստեղծութիւնը» նիւթով:

2008էն ԽԱՀՊՄՀի «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի մեթոդիստ է, 2022էն՝ գիտական աշխատող, 2014էն՝ ԽԱՀՊՄՀի հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ անոր դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի օգնական-դասախօս, 2018էն՝ դոցենտ: 2019էն անդամ է «Հայկ Նազգաշեան գրական գնահատանք» հիմնադրամի յանձնախմբին: Հեղինակած է *Զարեհ Խրախունին եւ արեւելահայ բանաստեղծութիւնը* (2013) եւ *Գրական հորիզոնի ներքին շերտերում* (2022) հատորները, կազմած է խմբագրած Սփիւռքի գրականութեան վերաբերող տասնեակ գրքեր:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական եւ նամակագրական հարցադրումներ: 2010էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Հայկ Աւագեան

haigavakian@yahoo.com

Ծնած է 1964ին, Գահիրէ: 1991ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցի դաշնակի եւ երաժշտագիտութեան բաժինները: 1991-94՝ մաս կազմած է Գահիրէի երաժշտանոցի ուսուցչակազմին, 1992-2009՝ Գահիրէի օփերայի երգչախումբի խմբավար, 2007-10՝ Աղեքսանդրիոյ մատենադարանի քառածայն եւ մանկական երգչախումբերուն գեղարուեստական ղեկավար: Տուած է բազմաթիւ դաշնակի մենանուագներ:

Հեղինակ է հայերէն, արաբերէն եւ անգլերէն ատելի քան 50 երաժշտագիտական, բանասիրական ու պատմափիլիսոփայական հատորներու: 2001-8՝ խմբագրած է *Ծիծեռնակ* երաժշտական եռամսեան, պատրաստած հայկական առաջին օփերայի՝ Տիգրան Չուհաճեանի *Արշակ Բ.*ի (1868) բնագիր տարբերակի քննական խմբագրութիւնը: Խմբագրած է հրատարակած է անտիպ երկասիրութիւններ: 2013էն կ'աշխատակցի *Ջահակիրի*ին, որուն խմբագրական խորհրդատուն է 2016էն: Հեղինակային իր վերջին գիրքերն են՝ *Մառի Պէյլէրեանի Եգիպտոսի յարիւնները (1896-1909) եւ ընկերվարական ֆեմինիզմը* (2022) եւ *Էտուին Ժերար Համաճեան՝ գաղափարապէս համակրած արուեստագէտը* (2022): Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի կազմակերպած եւ այլ գիտաժողովներու: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Եւրի Աւետիսեան

yuriavetisyan@ysu.am

Ծնած է 1961ին, Արտաշատ: 2002ին պաշտպանած է դոկտորականը՝ «Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն» նիւթով: 1988-2002՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի դասախօս, 2008էն՝ նոյն ամբիոնի փրոֆեսոր, 2015-9՝ ԵՊՀ սփիւռքագիտութեան ամբիոնի հիմնադիր-վարիչ, 2013էն՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի վարիչ: 2011էն անդամ է *Բանբեր Երեւանի համալսարանի*, իսկ 2013էն՝ *Հայագիտութեան հարցեր* պարբերականներու խմբագրական խորհուրդներուն: 2009-14՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան ատեսանի անդամ: Պարգեւատրուած է ԹՄՄ «Հայկաշէն Ուզունեան» ամէ-

Նամեայ մրցանակ-պատուոգիրով (2003), ԵՊՀ ոսկեայ մետալով (2015) են.: Համահեղինակ է գիրքերու, հեղինակ՝ դասագիրքերու, մենագրություններու, որոնց վերջինը՝ *Հայագիտության զուգահեռականներում* (2021):

Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն լեզուի կանոնակարգման հարցերը, հայոց լեզուն և խօսքի մշակոյթը, արեւմտահայերէնը, ձեւաբանությունը, արեւմտահայ բանաստեղծության լեզուն, արեւելահայերէնի և արեւմտահայերէնի զուգադրական քերականությունը, լեզուի զարգացումը, պաշտօնական լեզուն են.: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Մերի Աւետիսեան

meryavetisyan@1984gmail.com

Ծնած է 1984ին, Մեղրի, Սիւնիքի մարզ: 2019ին պաշտպանած է մագիստրականը՝ ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնը՝ «Արեւմտեան որոշ շրջանների պատմաազգագրական բնութագիրը ըստ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիւի նիւթերի» նիւթով: Ներկայիս աւագ գիտաշխատող է Սարգարապատի հերոսամարտի յուշահամալիրի Հայոց ազգագրության և ազա-տագրական պայքարի պատմության ազգային թանգարանի նիւթական մշակոյթի բաժնին: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն սպասքի կիրառական և ծիսապաշտամունքային գործառնությունները: 2021էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արտակ Ասատրեան

sardarapatasatryan@gmail.com

Ծնած է 1978ին, Արմալիրի մարզի Արաքս գիւղը: 2006ին աւարտած է ԽԱՀԴՄՀՀ: 2006-16՝ Սարգարապատի հայոց ազգագրության թանգարանի ազգագրության բաժնի գիտաշխատող, 2020-21՝ Զուարթնոց պատմամշակութային թանգարանի գիտաշխատող: 2021էն՝ վարիչ Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի:

Հրատարակած վերջին յօդուածն է՝ «Կարինում 1785 թուականին պատրաստուած և Հայաստանի պատմության թանգարանում պահուող N 3579 Սինին»: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն ԺԹ. դարավերջ-ի. դարասկիզբի պղնձագործությունը (պղնձագործական արհեստ և արտադրանք) և արծաթագործությունը (արծաթագործական արհեստ և արտադրանք): 2016էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արծուի Բախչինեան

artsvi@yahoo.com

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածուական «Վահան Տէրեանի ստեղծագործական աշխատանոցը» նիւթով: 2009էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթավայրերի և Սփիւռքի բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանություններու, որոնց վերջինը՝ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shemakha"* (համահեղինակ՝ Վարդան Մատթէոսեան, 2022): Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ շարժանկարի, պարարուեստի պատմութիւնը, նոր շրջանի պատմա-բանասիրական նիւթերը, երեւելի հայազգիներ...:

1998էն կ'աշխատակցի ՀՀՀին: 2001-21՝ ՀՀՀ ներկայացուցիչն էր Երեւանի մէջ:

Յասմիկ Գալստեան

hasmikgalstyan1979@gmail.com

Ծնած է 1979ին, ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գիւղը: 2021ին պաշտպանած է թեկնածուական՝ ԳԱԱ Մ. Աբեղեանի գրականության հիմնարկին մէջ՝ «Չար ոգիները հայ ժողովրդական գրոյցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառնությունների» նիւթով: Ներկայիս ԳԱԱ ՀԱԻի բանահիւսության տեքստաբանության բաժնի գիտաշխատող է, հեղինակ՝ գիտական յօդուածներու: Գիտական հետաքրք-

րութիւնները կ'ընդգրկեն հայ բանագիտութիւնը, առասպելաբանութիւնը, մասնատորապէս՝ հայ ստորին առասպելաբանութիւնը:

Մարէք Եանտաք

Marek.Jandak@ff.cuni.cz

Ծնած է Քոլին, Չեխիա: 2016ին պաշտպանած է մագիստրականը պատմութեան գծով՝ Փրակի Charles University արուեստից բաժինէն, նիւթ ունենալով «Բրտութեան գործադրումը Հայոց Յեղասպանութեան ընթացքին կամ մէջ. ազգային խումբի մը քանդումը՝ Խարբերդ եւ Մեզրէ գաւառական քաղաքներուն մէջ»: Ներկայիս կ'աշխատի դոկտորականին վրայ, նոյն համալսարանին մէջ, միաժամանակ ժամանակակից պատմութեան մասնագէտ է Չեխիոյ գիտութիւններու ակադեմիային մէջ: Հեղինակ է *Arménská Genocida: Příčiny, průběh a osobní svědectví [The Armenian Genocide: Causes, course of events and personal testimonies] (1915–1922)* հատորին (Փրակա 2018) ունի նաեւ գիտական յօդուածներ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայոց Յեղասպանութիւնը, օտար ականատեսներ եւ փրկարարներ Արեւելեան Անատոլիոյ Խարբերդ եւ Մեզրէ քաղաքներուն մէջ, 1915-22ի Էլզափի շրջանը, մարդասիրական առաքելութեանց պատմութիւն, ազգապետութեան համակարգը:

Արմենակ Եղիայեան

armenag@gmail.com

Ծնած է 1939ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն Ժոզէֆ համալսարանի ֆրանսական գրականութեան եւ լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ առամնաբուժութեան բաժանմունքները: Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մեարոպեան Կոտորու ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Ծիածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց լեզուի կառոյցն ու շարահիւսութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ճան Էրզուրումլուօղլու

canerzurumluoglu@hotmail.com

Ծնած է 1980ին, Պոլիս: 2017ին պաշտպանած է մագիստրոսականը՝ «Une Comparaison Critique de la Conception de L'espace Chez Leibniz et Chez Kant» նիւթով: 2001-10՝ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է պոլսահայ վարժարաններու մէջ, իսկ 2015էն՝ ուսողութեան դասախօս է Նիշանթաշը համալսարանին մէջ:

Արթօ Թաւօքճեան

arto@designshiva.com

Ծնած է Մոնթրէալ, 1958ին: 1982ին աւարտած է Քոնքորտիա համալսարանի Communication Studies բաժինը պսակաւոր արուեստից վկայականով:

Ան ինքզինք կը նկարագրէ իբրեւ «որսորդ մը արուեստի արժէքաւոր գործերու, որոնք լքուեցան, երբ հայեր ստիպուեցան փախչիլ Օսմանեան Կայսրութենէն՝ 1915ին»: Հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ արուեստն ու հայոց պատմութիւնը: Հաստատած է հայ արուեստին նուիրումը www.hyeantiques.com կայքը:

Սեւանա Թոփալեան

sevana.topalian@gmail.com

2022ին մագիստրականով վկայուած Հայկազեան համալսարանի հիւանդասենեակային հոգեբանութեան մասնագիտութեամբ: Ներկայիս կը պաշտօնավարէ Լիբանանի հանրային առողջապահութեան նախարարութեան ծիրին մէջ գործող առաջնային առողջապահական կեդրոնին մէջ, Պէյրութ: Միաժամանակ մասնակի ժամանակով կը վերահսկէ Embrace զգացական օգնութեան եւ անձնասպանութեան կանխման կեդրոնին մէջ:

Լեւոն Լաճիկեան**levon.lachikyan55@gmail.com**

Ծնած է 1955ին, Գիւմրի: 1980ին աւարտած է ԵՊՀ բանասիրական հիմնարկի թեկնածուականը: 2012էն դասախօս է ԵՊՀի մէջ: 2021էն *Շիրակ* եւ *Մաշտոց* գրական-գեղարուեստական հանդէսներու գեղարուեստական խմբագիր:

1995-2011՝ Ամերիկայի հայ օգնութեան ֆոնտի (ՀՕՖ) մամուլի քարտուղար, 2012ին՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ամերիկայի հայ համայնքներու վարչութեան պետ, 1999էն անդամ է ՀՀ նկարիչներու միութեան, իսկ 2005էն՝ ՀՀ լրագրողներու միութեան: 2010ին արժանացած է ՀՀ մշակոյթի նախարարութեան, իսկ 2019ին՝ ԵՊՀ ոսկէ մետալներուն: 2021ին մրցանակակիրն է ԱՊՀ երկիրներու «Գրքարուեստ» XVIII միջազգային մրցոյթին: Հեղինակած է շարք մը գիրքեր, որոնց վերջինը՝ *Հայկական եկեղեցիներ* պատկերագիրքը (2021): 2010էն տուած է անհատական շարք մը ցուցահանդէսներ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ուշ միջնադարի հայ գեղագիտական միտքը, Մխիթարեան միաբանութեան սկզբնաւորման շրջանը, արդի հայ կերպարուեստը:

Լալիկ Խաչատրեան**lingualal51@mail.ru**

Ծնած է 1952ին, Կամօ քաղաքը (այժմ՝ Գաւառ): 1973ին աւարտած է ԽՍՀՄԿԺի բանասիրական ֆակուլտետը: 1997ին պաշտպանած է դոկտորական, 2003ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1997-2003՝ գրաբար եւ հայ հին գրականութիւն դասաւանդած է Հալէպի մէջ: 2001-13 եւ 2015-16՝ ԽՍՀՄԿԺ հայոց լեզուի եւ անոր դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հին հայերէնը, բառակապակցական իմաստաբանութիւնը, բառարանագրութիւնը, հայոց լեզուի տեսութիւնը, ընդհանուր լեզուաբանութիւնը եւ փոխառութիւնները: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու: 2019էն վարիչն է ԽՍՀՄԿԺ լեզուաբանական հետազոտութիւններու գիտական աշխատանոցին:

Յակոբ Կիւլիճեան**koulou@humnet.ucla.edu**

Մասնագիտացած է տնտեսագիտութեան (MBA) եւ գրականութեան մէջ՝ Նարեկացիի քերթողականին շուրջ դոկտորականով: Ուսումնասիրած եւ հրատարակած է սփիւռքահայ բանաստեղծութեան, ինչպէս նաեւ ժառանգական լեզուի, մշակոյթի, սփիւռքներու եւ կարողականութեան (virtuality) փոխազդեցութեանց մասին: Ունի խորհրդատուական լայն փորձառութիւն, արհեստագիտութեան վերաբերող քաղաքականութեան շուրջ օժանդակած ըլլալով ձեռնարկութիւններու եւ պետական մարմիններու:

2010ականներուն յատկապէս գործօն գտնուած է արեւմտահայերէնի շուրջ հետազոտութեամբ ու ծրագիրերով՝ սկսելով UNESCOի կողմէ արեւմտահայերէնի վտանգութիւնը հիմնաւորող տեղեկագրէն, մինչեւ լեզուի կենսունակութեան մասին նոր տեսութեանց առաջադրումը եւ գործնական կիրառումներու փորձարկումը UCLAի մէջ: Ասոնց կարգին են «Ժամանակայնօրէն պայմանաւորուած խորշաւորում»ի յղացքը, սպառող ու արտադրող վճռական զանգուածի ապահովման կեդրոնական կարելիութիւնը, եւ ատոր համար լեզուն «ապախորշաւորելու» եւ ստեղծագործ գրաճանաչութիւն տարածելու եղանակը: Ներկայիս UCLAի հայ լեզուի եւ մշակոյթի Խաչիկեան դասախօսական ամբիոնի վարիչն է: 1999էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ջաւէն Կնեազեան**zavenkniasian@yahoo.com.ar**

Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Հետեւած է Պուենոս Այրէսի պետական համալսարանի ճարտարագիտութեան դասընթացներուն:

1992-ին հայ մշակույթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կրթական հաստատութեան մէջ: Անդամ է Արժանթինի երաժշտագիտութեան ընկերակցութեան: Հրատարակած է գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն: Վերջին հրատարակութիւնն է *La Historia Armenia a Través de un Traje* (Հայոց պատմութիւնը տարազի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական երաժշտական գործիքները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018-էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Արտաշէս Ղազարեան

artashes.ghazaryan@rambler.ru

Ծնած է Երեւան, 1963-ին: 1995-ին պաշտպանած է թեկնածուական ՀՀԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկին մէջ «Դաւանական պայքարը եւ քաղաքական կողմնորոշման հարցը քրիստոնէայ Արեւելքում եւ Հայ Եկեղեցին (Դ-Ձ դարեր)» նիւթով: 2007-ին ԵՊՀ-ն իրեն շնորհուած է դոցենտի կոչում: 2002-էն ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ սպորտի նախարարութեան բարձրագոյն որակաւորման կոմիտէի գլխաւոր մասնագէտ է: 2003-էն կը դասախօսէ ԵՊՀ-ի մէջ, իսկ 2009-էն՝ ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրականի: Վարած է խմբագրական պաշտօններ Հայկական հանրագիտարանի եւ Քրիստոնէայ Հայաստան հանրագիտարանի մէջ, 2000-2՝ ՀՀ կառավարութեան առընթեր կրօնի գործերու պետական խորհուրդի բաժնի պետ:

Համահեղինակ է Հայաստանեայց անետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), (1999, պատ. Ռընէ Լետոնեանի հետ), հեղինակ է անլի քան 40 գիտական յօդուածներու: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայ առաքելական եկեղեցիի վաղ միջնադարի պատմութիւնը, Հայ անետարանական եկեղեցիի եւ անետարանական համայնքներու պատմութիւնը, Միջին դարերու պատմութիւնը, քաղաքակրթութիւններու տեսութիւն եւ պատմութիւնը:

Արման Մալոյեան

armanmaloyan1976@gmail.com

Ծնած է 1976-ին, Երեւան: 1996-ին աւարտած է ԽԱՀՊՄՀ-ի պատմութիւն եւ մանկավարժութիւն բաժինը: 2011-ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտեան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրութիւնը XVIII դարի երկրորդ կէսին» նիւթով: 2007-19՝ պաշտօնավարած է ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մէջ, իբրեւ հայագիտական եւ ընկերամշակութային դասանիւթերու բաժնի գլխաւոր մասնագէտ: 2014-19՝ պատասխանատու քարտուղար Հայագիտութիւնը դպրոցում ամսագրին: 2021-էն կը պաշտօնավարէ ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան «Կրթութեան զարգացման եւ նորարարութիւնների ազգային կենտրոն» հիմնադրամին մէջ, իբրեւ վերապատրաստման ծրագրերու մշակման եւ վերապատրաստումներու արդիւնաւէտութեան գնահատման բաժնի պետ: 2011-ին հեղինակած է «Բազրատունեաց Հայաստանի Պետական Կարգը» պատահողը: Հեղինակ է շարք մը գիտական յօդուածներու, նուիրուած՝ ԺԸ.-ԺԹ. դարերու Արեւմտեան Հայաստանի վարչատարածքային բաժանումին, առետուրին, քաղաքական իրավիճակին, ԺԸ. դարու Կ.Պոլիսին, Ուրֆային, Էրզրումին, Կարսին, Տրապիզոնին, Մարտինին:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայաստանի ԺԸ.-ԺԹ. դարերու պատմութեան աղբիւրագիտութիւնը, պատմագրութիւնը, պատմութեան դասաւանդման խնդիրները, հայ մշակույթի եւ դպրոցի պատմութիւնը, հայ գաղթավայրերու պատմութիւնը, Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը եւ տեղագրութիւնը: 2016-էն կ'աշխատակցի ՀՀ-ին:

Թաթուլ Մանասէրեան

tatoulm@gmail.com

Ծնած է 1960ին, Երեւան: 2001ին պաշտպանած է դոկտորականը՝ «Միջազգային նոր տնտեսակարգի հիմնախնդիրները» նիւթով: ԵՊՀ դասախօս-փրոֆեսոր է 1998էն: 1991էն կը ղեկավարէ Այլընտրանք հետազոտական կեդրոնը, գլխավոր խմբագիրն է *Այլընտրանք* գիտական հանդէսին: Գիտական խորհրդատուութիւն կատարած է Շանհայի, Փեքինի, Էնթուրպի, Քենզըսի, Սան Ֆրանսիսքոյի, Սալեմթոյի, Լոնտոնի, Պանքրքի, Սթենֆորտի, Քալիֆորնիոյ համալսարաններուն մէջ: 2009-11՝ ՀՀ ազգային ժողովի նախագահի խորհրդական, 2003-7՝ ազգային ժողովի պատգամատուր, 2001-2՝ Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների կեդրոնի գիտական ղեկավար, 2000-1՝ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան նախարարի խորհրդական, 1998-9՝ ՀՀ նախագահին կից քաղաքական խորհուրդի տնտեսական ենթայանձնախումբի նախագահ, 1997-8՝ ՀՀ արդիւնաբերութեան եւ առեւտրի փոխնախարարի պաշտօնատար:

Հեղինակ է յօդուածներու եւ գիրքերու՝ տնտեսական անվտանգութեան, միջազգային նոր տնտեսակարգի, ֆինանսական շուկաներու, պատերազմի տնտեսագիտութեան եւ ռազմարդիւնաբերական համալիրի եւ տնտեսական բնոյթի հիմնախնդիրներու մասին: 2019էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վարդան Մատթէոսեան

varny1@yahoo.com

Ծնած է 1964ին, Մոնթեվիտո: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի հայց. առաքելական եկեղեցւոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը:

Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին հրատարակուած հատորներն են *The Politics of Naming the Armenian Genocide: Language, History, and "Medz Yeghern,"* 2022ին, եւ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shamakha,"* 2022ին (Արծուի Բախշինեանի հետ): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Թեհմինէ Մարտոյեան

tehminemartoyan@gmail.com

Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկի, Իրանի բաժնին մէջ՝ «Կարմէլեանների տարեգրութիւնը՝ որպէս Իրանի 17-18րդ դարերի պատմագիտական աղբիւր» նիւթով: 2012էն դասախօս է Երեւանի տնտեսաիրաւագիտական համալսարանին մէջ, 2015էն նախագահն է «Լազարեան ինստիտուտ» գիտակրթական հիմնարկին: 2019էն Հայոց Յեղասպանութեան զոհերի ու վերապրողների փաստագրման եւ ուսումնասիրութեան բաժնի աւագ գիտաշխատող է Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ:

Հրատարակած է ուսումնասիրութիւններ ջուղահայերու, Շահ Աբասի, Զմիւռնիոյ աղէտին, հայոց Յեղասպանութեան հաւաքական յիշողութեան, սուրիահայերու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններ համարկումի նիւթերով: Համահեղինակ է եւ թարգմանիչ: Հեղինակն է *Կարմէլեանների տարեգրութիւնը՝ որպէս Իրանի 17-18րդ դարերի պատմագիտական աղբիւր* (2011) գիրքին: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Միհրան Մինասեան

mihran.min@gmail.com

Ծնած է Հալէպ: Երկրորդական ուսումը ստացած է Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը: Համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու ապստամբութիւնը օսմանցի կուսակալ Խորշիկ Փաշայի դէմ (1819-1820) - Աբրահամ արք. Քիւբէլեանի օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի Հասկ հայագիտական տարեգիրքին, *Բագինին*, *Յեղասպանագիտական հանդէսին*, *Բանբեր մարտնահարանին* եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով, նուիրուած հայ հնատիպ գիրքին, հայ պարբերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագիրներու, Հայոց Յեղասպանութեան պատմութեան, հայ լուսանկարչութեան եւն.:

Զբաղած է նաեւ բանահաւաքութեամբ: Հայոց Յեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած է վկայութիւններ եւ ազգագրական-բանահիւսական հսկայ նիւթ: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու ինստիտուտ-Մատենադարանի եւ ՀՀ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմէն Միքայէլեան

armen_michaelian@yahoo.com

Ծնած է Երեւան, 1960ին: 1982ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժանմունքը, 1982-91՝ աշխատած է Հայաստանի ԳԱ պատմութեան հիմնարկը, 1993ին աւարտած է Ֆրանսայի գործարարներու եւրոպական ուսումնավայրի դասընթացը: Հրատարակած է գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ, հեղինակ է ապագայագիտական, գիտափիլիսոփայական եւ լեզուաբանական աշխատութիւններու: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Աշոտ Մկրեան

ashot.mkrian@outlook.com

Ծնած է 1999ին, Երեւան: 2021ին աւարտած է ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտէտը պսակաւոր արուեստից վկայականով: Ներկայիս մագիստրական ուսման կը հետեւի ընդհանուր լեզուաբանութեան մէջ՝ նոյն համալսարանէն ներս:

2018էն անդամ է ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտէտի գիտական խորհուրդին: 2021էն խմբագիր է Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ հիմնադրամին մէջ, միաժամանակ 2022էն կը դասախօսէ Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիային մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայագիտութեան եւ ընդհանուր լեզուաբանութեան հարցերը, թարգմանագիտութիւնը, բառարանագրութիւնը:

Զաւէն Մսրոյեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ:

Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի հայ աւետ. գոլէճի տնօրէնը: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Հայերը համաշխարհային Բ. պատերազմին (2020): 1971էն կ'աշխատակցի ՀՀՀին:*

Գայիանէ Յակոբեան

gayik20@gmail.com

Ծնած է 1981ին, Արթիկ, Շիրակի մարզ: 2019ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Սիրիահայերի սոցիալ-մշակութային աղապտացիայի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 2014էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ մէջ:

Հրատարակած է հայաստանաբանակ սուրիահայերու մասին ուսումնասիրություններ: Գիտական հետաքրքրություններու ծիրը էթնիկ խումբերու ընկերամշակութային հիմնախնդիրներն են: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Շուշանիկ Յովհաննիսեան

shushanikhovhannisyan3@gmail.com

Ծնած է Արմաիր 1993ին: 2016ին աւարտած է ԽԱՀՊՄՀի գեղարուեստական կրթութեան ֆակուլտետի մագիստրականը, նիւթ ունենալով «Հայկական ժողովրդական խաղեր» թեման: 2014-22՝ գիտաշխատող է Սարդարապատի հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան թանգարանը: Ներկայիս կ'աշխատի ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութեան մէջ:

Գիտաւսումնասիրական հետաքրքրությունները կ'ընդգրկեն հայկական ժողովրդական խաղերու պատմությունը, ընկերային խաղերու տեսությունը:

Հայկ Նազարեան

nazaryan_h90.90@mail.ru

Ծնած է Երեւան, 1990ին: 2008-10՝ ծառայած է հայկական բանակին: 2015ին աւարտած է ԽԱՀՊՄՀի պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտետի մագիստրականը: 2018ին պաշտպանած է ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի թեկնածուականը՝ «Մեծն Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.)» նիւթով: 2015-21՝ աշխատած է Հայաստանի ազգային արխիւին մէջ: 2022էն աւագ գիտաշխատող է Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնին մէջ:

Մասնակցած է շարք մը հանրապետական եւ միջազգային գիտաժողովներու: Հեղինակ է *Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում (1914-1920 թթ.)*, (2020) հատորին եւ շարք մը գիտական յօդաւածներու՝ լոյս տեսած *Բանբեր Հայաստանի արխիւների*, *Էջմիածին*, *Լրաբեր*, *Հայկական բանակ ռազմագիտական հանդէս*, *Պալմաբանասիրական հանդէս* պարբերաթերթերու եւ գիտական ժողովածուներու մէջ: Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն ռազմական պատմություն, ռազմական արդիւնաբերություն, աշխարհառազմավարություն (Geostategy):

Սօնա Ներսիսեան

sona.nersisyan2016@gmail.com

Ծնած է 1989ին, Մեծամօր: 2012ին պաշտպանած է մագիստրականը՝ ԽԱՀՊՄՀի կրթութիւն եւ ընկերաբանութեան բաժնին մէջ, «Սոցիալական ցանցերի դերը սոցիոլոգիայում» նիւթով: 2019ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Սոցիալական ցանցերի դերը սփիւռքում» նիւթով: 2012էն կը գործէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ, Սփիւռքի հետազոտություններու բաժնին մէջ, իբրեւ աւագ գիտաշխատող:

Հեղինակ է ուսումնասիրություններու, նուիրում՝ սփիւռքահայ ներդրումներու, հայկական տարբեր շրջանակներու ցանցային յարաբերություններու, ՀՀ ներգաղթած սուրիահայերու համարկումին, հայօժախներու ինքնակազմակերպման խնդիրներու, ընկերային ցանցերու, նորգաղթականութեան եւ նորՍփիւռքի հարցերու: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վահրամ Շեմմասեան

vahram.shemmassian@csun.edu

Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ «The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915» նիւթով: 2006էն տնօրէն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Ունի

բազմաթիւ յօդուածներ եւ Մուսա Լեռան բնակչութեան նուիրում մենագրութիւններ, որոնց երկրորդը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգետատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիլմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման իր բերած նպաստին համար (2010): Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Ֆրանց Վերֆել պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Յակոբ Չոլաքեան

hagopcholakian@hotmail.com

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան, պաշտպանելով «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» աւարտաճառը: 2014էն ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ գլխաւոր գիտաշխատող է: 54 տարի աշխատած է իբրեւ հայերէնի ուսուցիչ եւ դասախօս:

Հեղինակ է հայերէնի դասագիրքերու, գիտական յօդուածներու եւ ազգագրական, բանագիտական, պատմագիտական եւ լեզուաբանական հատորներու, որոնց վերջինը՝ *Սուրիահայ դպրոցի պատմութիւն* (2 հատոր, 2021): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Անտիոքի շրջանի հայոց պատմութիւնը, ազգագրութիւնը, բանահիւսութիւնը, բարբառը, արեւմտահայերէնը, Սփիւռքի կրթական վիճակը: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Սամուէլ Պօղոսեան

poghosyansamvel@yahoo.com

Ծնած է 1977ին, Երեւան: 2003ին պաշտպանած է թեկնածուական՝ «Պօղոս Նուպար. հասարակական-քաղաքական գործունէութիւնը», 2016ին՝ դոկտորականը՝ «Կիլիկիան հայ հասարակական-քաղաքական շրջանակների եւ Անտանտի երկրների ծրագրերում (1914-1918)» նիւթով: 2018ին ստացած է փրոֆեսորի կոչում: Հայաստանի պատմագէտների ընկերակցութեան անդամ է: 2015-18՝ *Պատմութիւն եւ հասարակագիտութիւն* տարեգիրքի պատասխանատու քարտուղար: 2019էն՝ *Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրագրու* հանդէսի խմբագրակազմի անդամ: 2022էն՝ *Բանբեր Հայաստանի արիւնների* հանդէսի գլխաւոր խմբագիր: 2003էն կը դասաւանդէ ԽԱՀՊՄՀին մէջ: 2015էն՝ փոխվարիչն է նոյն համալսարանի պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտետին: Հեղինակած վերջին հատորն է՝ *Հայաստանի ինքնավարութեան ծրագրերը 1878 թ.* (2018), համահեղինակ է գիրքերու, բուհական դասագիրքերու, գիտական յօդուածներու:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայկական Հարցի եւ միջազգային դիւանագիտութեան, Հայոց Յեղասպանութեան, Կիլիկիոյ 1914-1921ի պատմութիւնը, Հայկական լեզունը, Պօղոս Նուպարի կեանքն ու գործունէութիւնը:

Տիրուհի Սիրեկանեան

tiruhi.sirekanyan@list.ru

Ծնած է 1993ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի տարածաշրջանի Աստղածոր գիւղը: 2022ին աւարտած է ԽԱՀՊՄՀի հայոց պատմութեան ամբիոնի թեկնածուականը: 2018էն պատմութեան եւ հասարակագիտութեան ուսուցիչ է Աստղածոր գիւղի միջնակարգ դպրոցին մէջ: Աշխատակցած է *Էջմիածին* ամսագրին եւ *Մխիթար Գօշ*, ու ԽԱՀՊՄՀի հայագիտական հանդէսներուն:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ գրքի տպագրութեան խնդիրները, հայերէն հնատիպ գրքերու յիշատակագրութիւնները:

Գէորգ Ստեփանեան

[sasun-07@mail.ru](mailto:susun-07@mail.ru)

Ծնած է 1966ին, Սիսիան: 1996ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի եւ Արեշ գաւառներում 1918-1920 թթ.» նիւթով: 2009ին պաշտպանած է դոկտորական՝ «Բաքուի նահանգի հայութիւնը XIX դարի երկրորդ կէսին եւ XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրութիւն)» նիւթով: 2008ին ստացած է դոցենտի եւ 2013ին՝ փրոֆեսորի կոչում: 2008էն կ'աշխատի ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի «Հայ գաղթօջախների եւ Սփիւռքի պատմութեան» բաժնին մէջ, 2016 Դեկտեմբերէն՝ նոյն բաժնի վարիչն է: Հեղինակ է շարք մը հատորներու, որոնց վերջինը՝ *Համազասպ Սրվանձարեանց* (2016):

Գիտական ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն Բաքուի եւ Գանձակ-Ելիզաւետպոլի նահանգներու հայութեան պատմաժողովրդագրական հարցերը, Օսմանեան Կայսրութեան եւ մուսաւաթական Ադրբեջանի կազմակերպած կոտորածները, Բաքուի նահանգի հայութեան հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային կեանքը: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Լիլիկ Ստեփանեան

lilikstep@gmail.com

Ծնած է 1960ին, Արտաշատ: 1978-81՝ ուսանած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտետը, իսկ 1981-84՝ Մոսկուայի Լոմոնոսովի անուան պետական լատինական տիկայի ֆակուլտետի հեռուստալրագրութեան բաժինը: 2008ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հեռուստատեսային ռեպորտաժ. Զարգացման արդի միտումները» նիւթով:

2012էն սկսեալ աւագ դասախօս է Երեւանի Վ. Բրիւսովի անուան պետական համալսարանի լրագրութեան գիտաուսումնական կեդրոնին մէջ: Միաժամանակ դասաւանդած է ԽԱՀՊՄՀ, ԵՊՀ մէջ: Երկար տարիներ պաշտօնավարած է Հայաստանի պետական հեռատեսիլի թէ՛ այլ կայաններու մէջ (Շողակաթ, Սիւլինթ, Շանթ), մասնակցած, խմբագրած, յաճախ հեղինակած է հեռատեսիլային ուշագրաւ յայտագրեր, հաղորդաշարեր, ինչպէս՝ «Երեւանը եւ Երեւանցիները», «Ստորակէտ», «Թաքնուած Երեւան», «Թաքնուած Հայաստան» են.: Ունի մասնագիտական յօդուածներ, հեղինակն է *Հեռուստատեսային ռեպորտաժ* (2009) հատորին:

Անդրանիկ Տազէսեան

adakessian@haigazian.edu.lb

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ “Democracy and integration in multicomunal polities: the Armenians and the Kurds in Lebanon” նիւթով: 1993-2018՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է ՀՀՀին: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Յեղասպանագիտական հանդէս* (2018), *Բազմավէպ* (2019) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Եգիպտոսի, Սուրանի եւ Եթովպիոյ հայերը/1 գիտաժողովի նիւթեր* (2022), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՀ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչողիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անի Ֆիշենկեան

fishenkjjanani@hotmail.com

Ծնած է 1961ին, Հալէպ: 2004ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1971թթ.»

նիպով: 2016էն ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի արեւմտահայերէնի բաժինի գիտաշխատող է, իսկ 2017էն՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու պատմութեան բաժինի գիտաշխատող: 2014էն արեւմտահայերէնի դասախօս է Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցին: 2010ին եւ 2018ին պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան կողմէ:

Հեղինակ է շարք մը գիրքերու, վերջինը՝ *Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970 թթ.)* (2018): Մասնակցած է Հայկազեան համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի Սուրիոյ հայօճախին նուիրուած գիտաժողովին: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը, Քուէյթի հայօճախը: 2017էն կ'աշխատակցի ՀՀՀին: